



Լևոն Շանթ

Լեռան աղջիկը

Նուագ երրորդ

ԼԵՌՆՈՒՀԻՆ

Այս կեանքը սրտիս նո՛ր էր ճշմարիտ,
Նո՛ր իր լեռնական պարզութեամբը վեհ,
Նո՛ր իր հնքնաբուխ յոյզերովն անմիտ,
Նո՛ր իր գեղովը, որ մարդ կթովէ:
Նաեւ հոն մեզի նո՛ր էր ծերունին,
որ անշարժ նստած կխորէր հնքնին
Աշխոյժ տարիքին իր ուժն ու գործեր
Եւ կոհիները, որ ան վարած էր
Քաջ թշնամուն դէմ երես առ երես,
«Չէ՛, ան ատենը ուրիշ էր աշխարհ»,

ու խոր թախիծէն ծերը կողոպար:

Է՛հ, ինծի համար նոր էր վերջապէս

Այն լեռան վարդը՝ վայրի ու չքնաղ՝

Իր աղքատ, պարզուկ ձորձերուն մէջն ալ:

Բայց քիչնքիչ վարժիլ սկսանք նորեն

Վսեմ բնութեան գոյն ու ձեւերուն.

Կապոյտը երկնի, կանաչը դապտէն,

Ոսկի դեղինը ամէն իրիկուն

Եւ արշալոյսի երկինքը բոսոր

Մոլոր աչքերնուս ալ չէր անսովոր:

Դեռ չորս հեղ արեւ գլխնուս չանցած

Հոն մեզ անծանօթ տեղ չէր մնացած:

Կաթէ ջրվեժը պաղ, փրփրադեզ,

Դաշտակի ծայրի գոս ժայռը խոժոռ,

Հարեւան բլրի գլուխը խոշոր,

Նոյնիսկ մամռապատ քարերը դեզկոդեզ,

Որ մտերմօրէն վար կնայէին,

Ա՛հ, ո՛րքան, ո՛րքան սրտիս մօտ էին:

Հովուի վրանն ալ արդէն օտար չէր,
Կարծես հին ծանօթ էինք մենք իրար.
Լեռան աղջիկը ալ դուրս չէր փախչէր
Ու մեր հարցերուն պատասխան կուտար:
Երբ իր ամրչկոտ ձայնը երերուն
Գար երազանքիս հիւսվեր թելերուն՝
Կղիտէի ես գորովով անանց
Իր մութ աչքերուն խաւարն անթափանց,
Իր խիտ խոնքերուն կամարը կրկին,
Որ մացառներ են կարծես ձորափէն
Ու ձորին վրայ ստուեր կթփեն
Եւ թուխ այտերը, որ կբռնկին,
Եւ վարդ շրթունքին գոյգ թերթերը թաց,
Ուր չար համբոյր մը կար միշտ պահվըտած:

Ա՛հ, այն ատենը տասներութ տարուան
Բոց մը կշռչէր երակներուս մէջ.
Դեռ ամբողջ կեանքս էր սպասո՛ւմ միայն

ու էութիւնս՝ երազանք ու տենչ:

Եւ երբ պատահէր, որ թռչնակն անմեղ

Թափէր ծառերէն սիրայորդ գեղգեղ,

Ընկերուիիին շուրջը հաժելով

ոստոստէր, երգէր իր սէրն ու գորով,

Ես կրօքիս խորը՝ նախանձէն ուռած,

Կզգայի բուռն՝ ու յուզիչ իղձեր.

Հովը ականջիս լոկ սէր կհծծէր.

Եւ ես լալու չափ յուզուած, գրգռուած

Կուզէի սիրուիմ, կուզէի սիրեմ

Ու թռչնակին պէս, ոստոստեմ երգեմ:

Կզգայի սիրտըս լի էր ու գեղուն՝

Լի յորդելու չափ իր շրթոնքներէն՝

Ինչպէս անապակ գինի՝ն փրփրբուն,

որ դուրս կթափի իր ներքին եռէն:

Ու գանգիս տենդոտ անուրջներուն մէջ

Միրոյ պատկերներ կուգային անվերջ.

Պատկերներ օդէ, պատիր, մանկական,

Բայց անբիծ, անգին ու իդեական:

Այդ անուրջները հոգիս կօրրէին,

Երբ բախտըս ինձի գլորեց շիտակ

Լեռան աղբկան պարզ վրանին տակ.

Ա՛յ, այդ աղջիկը՝ քնքուշ լեռնուհին՝

Որ ինչպէս իր սեպ սարերն հարագատ,

Պարզ էր, գեղանի, խրոխտ ու ազատ:

ու կմնայի ես հաճախ մինակ

Լեռներու դստեր հրապոյրին քով.

Լո՛ւտ կնաստէի հին վրանին տակ

Ընթերցանութեան նուրբ պատրուակով:

Բայց ի՞նչ ընթերցում. ո՞վ է այն տղան,

Որ լուրջ գբաղի, երբ բոց կտեղան

Զոյգ մը կանացի աչքեր հմայիչ

ու հայացքըդ վեր կքաշեն քիչևքիչ:

«Լիր արքան» ծունկիս կնիրիէր անուշ,

Անտարբեր ձեռքով ես հագիւ երբեք

Սուտ կշրջէի թերթերը մէկսմէկ:

Չէ՛. կկարդայի ժողոված խելքս ու ուշ,
Բայց ո՛չ խեղճ գրքիս տողերն անկենդան,
Այլ սեւ, կախարդիչ աչքերն աղջրկան:

Եւ ինքը գիտէր, կշիկնէր հանկարծ,
Վրանէն կելլէր, կդառնար նորէն,
Եւ իմ հալածող հայեացքէս գերուած՝
Ժպիտ կթափէր նուրբ շրթունքներէն:
Մերթ ալ նստելով իր աշխատանքին
Մեր գորշ վրանի լայն մուտքի կողքին՝
Երգ մը կսկսէր, ձիգ երգ մը սարի,
Ինքն ալ, իր երգն ալ շատ պարզ ու վայրի:
Իր անուշ ձայնը մերթ խուլ կորոտար,
Ինչ լեռան վայրագ, փոթոռկոտ հովեր,
Մերթ կթրթրոտար հնչուն ու երեր,
Ըսես, գեփիւղ ձորէն ձայն կուտար.
Հանկարծ կժայթքէր, ջրվեժ մը կարծես,
Մէկ ալ կմարէր, յոյսի լոյսին պէս:

Նիւթն ալ ու երգն ալ տխուր էր, քինոտ.

«Բուռն ջերմ սիրով կսիրէ Մարոն

Դրացի լեռան ամենէն սրտոտ,

Ամենէն կտրիճ տղան մրահոն:

Բայց այդ սուրբ սէրը պէտք է խոր պահուի.

Երկու ցեղերն են իրար թշնամի:

Մարոն չգիտէ. դեռ լուսաբացին

Անգլուխ դի մը գետէն հանեցին

Հօտի պահապան գամփոններն հուժկու:

Վարձկան հովիւը ճանչցաւ այդ դին,

Մարոյի հայրը ճանչցաւ իր որդին.

Եւ կատղած երդում կերաւ ահարկու,

Թէ պիտի լուայ բազկովը կթոտ

Իր հարազատին վատ մահն ու ամօթ:

Դեռ իր աչքերը ուժ ունին այնքան,

Որ իր վրէժի նշանը գտնեն.

Ու ծեր ձեռքերը պիտի չդողան,

Երբ հրացանի բլթակը քաշեն:

Նա՛. ժայռի տակէն գնդակը թռաւ,

Այն ի՛նչ կտրիճ էր, որ թաւալ ինկաւ:

Ետ կուգայ ծերը խեթ, դաժան ու քեն,

Արիւնոտ բան մը կախուած է ձեռքէն:

Մարոն հորը դէմ կվագէ արգա՛

Գեշ բնագոյով մը սիրտը թունդ ելած,

Եւ սարսափահար կանգ կառնէ հանկարծ

Դէմքը մահատիպ, աչքերը վայրագ:

Մագերէն կախուած հորը ձեռքէն ցած

Իր սիրականի դէմքըն է ճանչցած»:

Այսպէ՛ս կերգէր ան նստած քովնդի՛

Գողտրիկ գլուխը ցնցելով աշխոյժ.

Ու ճակտին տակէն նայուածք մը գաղտնի

Դէպ իմ անկիւնս նետելով զգոյշ:

Դիթելու իդձը ան ո՞ր էր ուսէր.

Եւ ինչո՞ւ գերել, գրաւել կուգէր:

Բայց ո՞րկէ ուսան աստղերը խայտալ,

Մեզի աչք ընել, պշրիլ ու խնդալ.

Ո՞րիկէ սորվեցաւ գետակը գուարթ

Փրփուրէ քող մը ձգել իր վրայ.

ան ինչո՞ւ կեռայ, ինչո՞ւ կգոռայ,

Ինչո՞ւ կքծնի ափերուն հպարտ.

Ծիածանն ինչո՞ւ կամար կկապէ,

Երբ երկինք գոհար ու շող կթափէ:

Մենք իրարու հետ քիչ կխօսեինք.

Հարց մը կամ կատակ, միշտ ալ ժպտերես.

Մերք ցոյց կուտայի ես մէկիկնմէկիկ

Քանի մը սիրուն պատկեր գրքերէս:

Ու մօտը նստած ծունկըս իր ծունկին՝

Լի հեշտանքով մը անուշ, անմեկին՝

Պատկերին միտքը կբացատրէի,

Ա՛, ես այդ պահուն բանաստեղծ էի:

Ան դէմքէս կախուած՝ կունկնդրէր անձայն.

Ու գոհ, միամիտ ժպիտ մը հանկարծ

Կելլէր շրթունքին, կարծես, իբրեւ վարձ

Իմ այդ սրտագին գլերութեան:

Եւ այդ ժպիտն էր քնքուշ ու գոհար,

Որ խօսքիս նոր ուժ ու հումոր կուտար:

Եւ քիչնքիչ զգալ սկըսայ շուտով,

որ իմ գերութեան անտեղեակ հոգիս

Արդեն կապուած էր աննիւթ շղթայով.

Եւ կապանք մը որ՝ թեւ տուտար կեանքիս:

Նոր բան մը ըկաճէր սրտիս մէջ արագ՝

Հորդ ու թրթրոտն հուզում մը կրակ

Եւ խուժ ալիք մը կեանքի խորունկէն

Զգացումներըս գրկած էր ամեն:

Ու հարց կուտայի վարանքով համակ,

Թէ արդեօք ա՞ս էր, որ կանվանեն սէր,

Որուն խեղճ սրիտըս անժուժ կսպասէր,

որով գինովնալ կըղձայի անհագ:

Հարցիս պատասխան գլուխըս չէր տար,

Միայն ալ ուժգին սիրտըս կթնդար:

Ու կհոսէին օրերը գուարթ

Գոհար հուզումով ու ոսկի կեանքով.

Մինչդեռ լեռնային բնութիւնն հպարտ

Կզգուէր մեզի խանդաղատանքով:

Է՛հ, թող չմոռնամ այն օրերն անդարձ,

Երբ պատանեկան սիրտըս կեանք առած

Բնութեան, սիրոյ ծոցին մէջ անհուն՝

Գալիք կեանքի մը յոյսերով գեղուն՝

Կթափահարէր լանջիս տակ ուռած.

Երբ գործ տեսնելու անհագուրդ տենչէս,

Բիր նպատակներ կատեղծէի ես.

Երբ այդ հյոյզերուս բովին մէջ գտուած՝

Սոսկալի անէծք կուտայի իմ դէմ,

Սկզբունքներըս թէ երբեք դաւեմ:

ՆՈՒԱԳ ՉՈՐՐՈՐԴ

ԼԵՌՆԱՂԲԻՒՐԻՆ ՔՈՎ

Է՛հ, այդ օրերը շատ արագ անցան

Ժիր, պատանեկան կեանքիս վրայէն.

Ինչպէս ամպերուն մէջէն ցիրուցան

Կանցնի ասույր դէմքիդ ժպտալէն:

Միայն վառ յուշեր անուշ ու քնքուշ

Կրծքիս խորքերը ծածկած են զգոյշ. ^

Ճիշտ այդպէս տղան կապէ իր քով

Յարի մէկ ընծան անհուն զգուանքով:

Ո՛ր է Գեղարդը իր լեռներուն հետ

Եւ ո՛ր իմ արդի անկիւնս անկենդան.

Բայց մի՛շտ, երբ գրչէս հանգերը խոյս տան

Ու խոնջ հայեացքըս՝ կարօտով հաւէտ՝

Արդի հարեւան լեռներուն գամուի,

Ես ձե՛զ կխորհիմ, լեռներ հայրենի□

Վայրկեանի մը պէս, թռեր էր արդեն

Երկու շաբաթուան միջոցը սիրուն.

Ու վճռուեցաւ, որ երկու օրէն

Տանք հրաժեպտնիս այդ պերճ լեռներուն:

Մեկնելու վրայ ես չէի խորհէր,

Ուրիշ նոր հարց մը իմ միտքըս կօրրէր.

Արդեօք աղջիկն ալ կըմպէ՞ր սիրտը դող

Այս երբեցնող յուզումն էս հորդող:

Ժպիտն էր դիտիչ, բայց միշտանթափանց,

Աչքերն ալ մութնմութ, վար քաշող ու խոր,

Ինչպէս անահտակ անդունդն ահաւոր,

Ուր միայն խելքըդ կդառնայ անսանձ:

Եւ այս անորոշ ծփումն ու յոյսեր

Ա՛լ կհրահրէր թէ հուրքըս, թէ սէր:

Չէ՛. չէի կրնար հանդուրժել բնաւ,

Որ սէգ լեռնուիին մընար անտարբեր.

Պահանջոտ էի, գուցէ անիրաւ,

Բայց հպարտ հոգիս մերժում չէր տանէր:

Եւ գիտէի ալ, որ այդ աղկըան

Քունը կտրած էր, իմ քունիս նման.

Գիտնալը բաւ չէր, եւ պատրաստ էի

Կեանքիս օրերէն փունջ մը փետտելի,

միայն լսէի իր իսկ շրթունքէն,

Թէ իր միամիտ, անբիծ, կոյս սրտին

Իմ նայուածքներըս խռովք կազդէին՝

Խոռվք եւ անուրջ՝ որ կեանք կբերեն,
Թէ երբ ծունկ ծունկի մինակ մնայինք՝
Խորին հեշտանք մը ու դող կգգար ինք

Վերջին օրն էր, ան, վերջին իրիկուն.
Աղբիւրին վրայ ժայռի մը հենած՝
Նստէր էի ես մինակ ու նկուն,
Մասիսի խօսուն ակնարկին դիմաց:
Մօր գիրկը վազող գունդը ոսկեհեր
Իր մարող լոյսի ցօլքերով երեր
Կթափէր գոհար, մարգըրիտ անգին,
Մասիսի ծերուկ, ալեգարդ գանգին:
Արեւմուտքն ամբողջ արիւն էր կտրած,
Ուր կլողային դեղնորակ բոցեր.
Հոգնած արեւը դէմքը կգոցէր.
Ես կդիտէի մտացի՛ր, կտտրա՛ծ
Բնութեան պայծառ երանգներն այն պերճ,
Որ աչքերուս դէմ կփոխուէր անվերջ:

Հանկարծ մօտիկէն շրշին մը թեթեւ

ուր իր խորքերէն կյուզուի հոգիս:

Աշխոյժ շարժումով կդառանմ ետեւ

ու ջերմութիւն մը կվառի դէմքիս:

Ճանչցած էի ես քայլերը կոյսին.

Աղբիւրը կուգար հին կուժ մը ուսին:

Լուռ սպասեցի լարումով անհուն,

Մինչեւ ան կուժը լեցուց, ու խոհուն

Թեք տուաւ զգոյշ լեզ կապած քարին,

Ու, այծեամի պէս, ճարպիկ ու արագ

Դէպի այն ժայռը նետուեցաւ շիտակ,

Ուր նստած էի անշարժ ու լռին:

Եւ նազանքով մը անմեղ ու գող տրիկ

Ժպտեցաւ դէմքիս, նստեցաւ մօտիկ:

Կամաց մը վրաս ծռելով քովէս

Բաց մոռցած գիրքըս սկսաւ թերթել,

Լացող ուռննու թամբ ոստերուն պէս՝

Գրիկըս թափեցան վարսերը թելերէլ:

Աչքերուս դիմաց կեռար խռովքով

Կէս մը սքողուած կուրծքը կուրծքիս քով:

Ու կխօսէինք, բայց ի՞նչ՝ չգիտեմ:

Է՛հ, ի՞նչ կխօսին նստած իրար դէմ

Ջոյգ աղբիւրները անվերջ կարկաչով.

Միայն կգգայի, որ շունչըս նորէն

Ետ կուգա անոր մագերուն խորէն

Ու շրթունքներըս կայրէր իր տենչով□

Չգիտեմ ի՛նչպէս՝ հանկարծ ծոցայ,

Դողողող շրթունքով այտին հարեցայ:

Տնցում մը ըրաւ ու անշարժ մնաց.

Դէմքին վրայէն սիւքի մը նման

Սահեր էր անցեր համբոյրըս կամաց.

Կարծես հմայուէր, քարացեր էր ան:

Իսկ ես խելահեղ, ու բնագողորէն,

Իսպառ բորբոքուած վայելքի հուրէն,

Ուզեցի մէջքը շղթայեմ ամուր

Ջոյգ բազուկներու շղթայովը կուռ.

Բայց ան դիրաթք, ճկուն օձի պէս,
Թեւերուս մէջէն դուրս սողաց հանկարծ.

Կէս մը բարկացած, կէս մը սիրարծարծ
Թախծոտ հայեացքը սահեցուց դէմքէս՝
Անհետ ըլլալով ժայռերու ետին.

Ապուշ անձկութեամբ նետուեցայ գետին□

ՆՈՒԱԳ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԼԵՌՆ Ի ՎԱՐ

***Վրանին մութը կուրծքըս կճնշէր,

Եւ հուր կշնդէր բարձը այտերուս.

Կայրէի. տոկալ՝ ալ կարելի չէր.

Ցատկեցի տեղէս ու վրանէն դո՛ւրս:

Ու կշրջէի քայլելով մոլոր.

Առջեւս հօտը փռուած էր բոլոր.

Ոչխարներն անհոգ մտեր էին քուն

Խռնած իրարու՝ պառկածու կանգուն:

Եւ հանկարծ մէկը խորունկ շունչ կառնէր

Խուլ հառաչա՛նք մը, որ դուրս կպոռկար

Վշտոտ, ճնշուած կուրծքէ մը տկար:

Հօտի չորս կողմն ալ հսկայ գամփոններ

Միշտ իրենց պարտքին պատրաստ աչալուրջ՝

Նստած էին լուռ, միշտ արթո՛ւն, միշտ լուրջ:

Հեռուն ձայն չկայ. անշշո՛ւնջ, հանդա՛րտ:

Հո՛ւն մելամաղձոտ պայծառ լուսնին տակ

Վեհ Արագածի տխուր, ալեգարդ

Մտածկոտ դէմքը կերեւայ հստակ:

Դեռատի լեռներ երուկ սարին քով.

Մրադկային ձեւեր առած կատակով,

Հազիւ պահուտած կղս ստուերին մէջ՝

Իրար են գրկեր զգուանքով անվերջ:

Մինչ հովտին թանձրը մթութեան մէջէն

Բիրտ, անրջային դէ մքեր այլանդակ՝

Միշտ փոփոխուելով հազար ձեւի տակ

Իրար տիրեն, իրար կկանչեն

ու նախանձաբեկ կծաղրեն հտպիտ

Չահիլ լեռներուն սէրը միամիտ:

Բայց մ էկէն դադրեց հոգիս դիտելէն.

Ու նորէն նորէն մտաբերեցի.

Աղջկրան վերջին նայուածքը խորէն,

որ կարծես ընդմիշտ հառած էր ինծի:

Եւ զգացի, որ մանուկ էի դեռ,

Մինչ գիտէ՞ք կոյսին արժանին ո՞վ էր,

Ոչ թէ ինծի պղս երագող տղայ,

ԱՄՅՈՒ լեռնցի մը, ուրկէ կդողայ

Երեն անտառէն, արջը խոր ձորէն,

Որ կեսգիշերին ցգլուխ զինուած՝

Հովի պէս թեթեւ նժոյգը սանձած՝

Կուգայ սիրուիին կառնէ վրանէն

ու կրծքին սեղմած կտանի հեռուն.

Եւ մարդոց աչքին իր կինն է առտուն:

Նուաստութեան մը զգացումն ահեղ

Սկսաւ սիրտըս որդի պէս կրծել.

Է՞րհ, շնչին մարդու տեղը չէր այնտեղ,

Հոն ո՛ւժ, զո՛րծ պէտք էր, եւ ո՛չ երագել:

Բայց մերթ ալ ինծի այնպէս կթուէր,

Թէ այդ նայուածքը սէրն էր կարեմը.

Այդպէ՛ս կնայի եղնիկն անկասկած

Որսորդի նետէն վիրավոր ինկած:

Այդ նայուածքը լուռ, կարծես, կաղաչէր,

Որ չխաղայի իր հետ այդ քնքուշ,

Բայց վտանգաւոր կատակն անգգոյշ.

Եւ արդեօք իրաւ սա կատակ մը չէ՞ր.

Յօղի կատակ մը վարդի վառ կրծքին,

Որ շուտ կցնդի արեւածագին:

Այդ նայուածքը, ա՛հ, ինծմէ գոկթ կուգէր.

Գթալ իր անհոգ անդորրը կեանքին

Ու չներշնչել ապարդիւն յոյգեր,

Որոնք ծաղկէ գուրկ լոկ փութիշ կծիւն:

Եւ ես վարանած այդ հայեացքին դէմ

Կփռուիմ գետին հողը կդիտեմ:

Լալու փափագ մը կոկորդըս կուգայ,

ու սիրտըս կրծող կսկիծ մը կգգայ:

Հանկարծ արցունքը կհորդի աչքէս,
Լարումս ալ թու՛նալ կսկսի քիչնքիչ.
Մեղմիկ անխռով նիրի մը ամոքիչ
Կուգայ կկախտի թաց թերթերունքէս.
Եւ խո՛ր կննջեմ՝ ցօղով արցունքով
Թրշած խոտին մէջ, ոչխարներուն քով:

Մեղմ ու գեղգեղուն ձայն մը սրինգի
Հայթեց սկանջըս եւ ես արթնցայ.
Հովը երեսըս շոյեց մեղմակի՝
Ընդոստ շարժումով ելայ նստեցայ:
Լուսինը արդէն անհետ էր եղեր.
Ճերմակ, կապտագոյն նուրբ ժապատեններ
ձիգննեղ շերտերով փռուեր էր երկար,
որ լոյսի առջի ցօլքը կերերար:
Հովիւը ելած՝ սրինգը բերնին
Արօտ կքշէր հօքը արթնցած,
Որ կխլրտէր ու կամացկկամաց
Սուր մայուններով կեանք կուտա օդին:

Հեռուն կլսուէր խուլ ձայն մը կերկեր.

Լոյսը բացուելու արդէն մօտիկ էր:

Շուտ ընկերներս ալ ցատկեցին ոտքի.

Ամէն բան կապած պատրաստ էր արդէն.

Արեւը չելած իջնէինք պիտի

Այդ թարմ ու դալար մեր սարահարթէն:

Հապճեպ հրրաժեշտ տուինք աղմըկուն՝

Հիւրասէր ծերին եւ իրեններուն.

Եւ վերջին անգամ, երբ ես կարկամած

Աղջկըսն դէմքին նայեցայ կամաց,

Մեր հայեացքները իրարու զարկին,

Ի՛նչպէս խորունկ էր ու ի՛նչպէս յուզիչ

Իր ջերմ ակնարկը, իր ժպիտը ջինջ.

Կարծես կգգուէր, ու կըսէր մէկին.

«Է՛, թող. ամէն մարդ իր ճամփով, եղբա՛յր.

Բաժնուինք սիրով ու յիշենք իրար»:

Ու բաժնուեցանք, ան կեցած էր լուռ:

Արահետը ձախ ծոցն ա հանկարծ.

Վերջին նայուածք մը նետեցի տխուր

Եւ աղջիկն աչքէս կորուսի անդարձ:

Սուր խայթ մը ու ցաւ կգգայի ներսէս.

Ալ կասկած չկար, սիրած էի ես:

Բայց հազիւ հպած այդ սուրբ փորձութեան,

Թողեր կերթայի, անջա՛տ յաւիտեան:

Իսկ այդ անջատման լեղի բաժակէն

Դուք ձեր կեանքին մէջ ըմպա՞ծ էք երբեք.

Հեռացա՞ծ էք դուք ծա՛նր, սրտաբե՛կ

Այն սիրուն, կանանչ, գողտրիկ բլրակէն,

Ուրկէ մէ՛կը լուռ կհետեւի ձեզ

Եւ երբ ձեր սիրտը կպայթի կարծես□

Է՛հ, քանի՛ տարի անցած է հիմա

Այդ անհոգ կեանքիս երազ օրերէն.

Եւ որքա՛ն հեռու կապրիմ ակամայ

Իմ սրտիս մօտիկ չքնաղ վայրերէն:

Բայց գիշերները նեղ սենեակիս մէջ՝

Երկար հոգնելէս կամ ձանձրոյթէս վերջ՝

Հաճախ կերագեմ Գեղարդի օպան,

Կյիշեմ հատնհատ ամէն շնչին բան:

Ու աչքերուս դէմ կծնի պայծառ

Լեռան աղջրկան պատկերն անարատ,

Իմ անբիծ սրտիս յոյզերն այն առատ

Եւ վայրի սիրուս բերկրանքը անճառ,

Է՛հ, քա՛ղցր վայրեր, վայրկեաննե՛ր անգին

Իմ պատանեկան անրջոտ կեանքին: